ՆՈՐ-ԴԱՐ

№ 166 ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ Հ_ոբաթ 3 Հոկտեմբերի | 1887 | Հ_ոբաթ 3 Հոկտեմբերի ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 166

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատը՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում՝ են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների գնաւն է 2 կ., երեսփաներն համար կրկնապատիկ։

«Նոր-Դար»-ի խմբագրութիւնը այժմ գտնվում է Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Թիֆլիսի ժողովարանին (Կլուբին) կից Զուբալօվի տանը։

Редакція газеты «Норъ-Даръ» переведена на Головинскій проспектъ, въ домъ Зубалова, возлѣ помѣщенія Тифлисскаго Собранія.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բրոնիկոն.—Լուրեր։ Կէս գիշերային արեգակի և գրագէտ չինական-ների երկիրը (կը շար.)։ Յ. Կ. Ալվազօվսկի։
Բաղաքական.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պօլսի և արուսասմանի լրագրերից առնելով իրրև լուր հաղորդել էր մեր տեղական մամուլը, որ Չմիւռնիայի հայոց ժողովուրդը դժգոհ լինելով իրենց Առաջնորդից մի բողոքագիր է ուղարկել Կ. Պօլիս պատրիարքարան երեք հարիւր հոգու ստորագրութեամբ։ Այդ բողոքագրի մէջ մի առ մի թուած է այն գործերը, որ իբրև թէ կատարել է Չմիւռնիայի Ամեն. Առաջնորդը։ Բողոքագիրը ստորագրողները զնացել են իրենց Ամեն. Առաջնորդի մօտ՝ մեղայ են եկել և խոստովանել, որ իրենք խաբուած են և չեն իմացել թէ ինչ բանի են ստորագրում։

—

Ընթերցողը ստուգ կը կարդայ Չէյթունի հրկիզեալների համար եղած հանգանակութեան հաշիւը։ Իւր ժամանակին իւրաքանչիւր նուիրատուի անունը և ազգանունը հրատարակած լինելով, այս անգամ հրատարակում ենք միմիայն նրանց ազգանունները, որոնք հանգանակութիւն անելով ուղարկել են մեզ հաւաքած գումարները։

Այդ ցուցակի մէջ մտած չէ միայն մի պարոնի անունը, որովհետև նա հանգանակութիւնը և հաչիւը վաղուց վերջացնելուց յետոյ էր ուղարկել մի փոքրիկ գումար (10—12 ր.), որ տպագրուած չէ լրագրի մէջ։ Այդ գումարը ձգած է խմբագրութեան կողմից առած նուիրատուութեան և պօստային ծախքերի հաշուին։

Հարկաւոր ենք համարում յայտնել, որ մի երկու տեղից մինչև օրս էլ չեն ուղարկել խմբագրութեանս հանգանակած գումարները լրիւ, բայց խմբագրութիւնս միանգամ նուիրատուների անունները հրատարակելով, իւր կողմից պակաս գումարը լրացրել և ուղարկել է։

—

Երկու օր է, որ վերստին ժամանել է Թիֆլիս տրպարագատութեան մինիստրը պ. Մանասէինը և քննում է տեղուս դատարանական գործերը։ Շատերը հաւաքվում են այն տան առաջ, ուր գնահղած են նահանգական դատարանը և դատարանական պալատը։ Հետաքրքիր հասարակութիւնը ուզում է տեսնել պ. մինիստրին։

—

Առաջիկայ նոյեմբերի 1-ին Թիֆլիսում տեղի կունենայ դինուորական ծառայութեան կոչուածների ընդունելութիւնը։

—

«Рус. Курь.»-ի ասելով, մշակների հիւանդանոցի բժիշկ Ն. Պ. Բօգանօվը Մօսկվայի քաղաքային վարչութեան յայտնել է, որ տիկին կակ, Մօսկվայում բժիշկների օգնականուհիներ (կին ֆէլդշէրներ) պատրաստելու համար հիմնուելիք ուսումնարանի օգտին նուիրաբերում է 50,000 րուբլի։ Նուիրատուութիւնը չնորհակալութեամբ ընդունուած է։

—

Թեմիս առաջնորդը հոկտ. 2-ին ուրբաթ, ճանապարհ ընկաւ Վլադիկավկասեան ճանապարհով դէպի Դուշէթ։

Ինչպէս իմանում ենք, Արխիստակէս սրբազանը մտադիր է մի ամիս ճանապարհորդելու այցելելով Քութայիս, Ախալցխա և այլ վրաստանի և Իմերէթի թեմի չրջանում գտնուող տեղեր։

—

Չնայելով որ արդէն հոկտեմբեր ամսի մէջ ենք, եղանակը այնպէս մեղմ և լաւ է, օրերն այնպէս պարզ և գեղեցիկ են, որ կարծես թէ մարդուն ճանապարհորդելու են հրաւիրում. ով որ առաջ չոգիերին մնացել է քաղաքում, իւր կատարած գործերից չուտ կարող էր այժմ աւելի հանգիստ սրտով ճանապարհորդել և վայելել աշնանային բնութեան գրաւչութիւնը։

—

Լևոն XIII պապի անմիջական չանճնարարութեամբ, անցեալ տարի կազմակերպուած էր կաթոլիկական մի առաքելութիւն՝ Հայաստան ուղարկելու համար, որին մասնակցում էին մի քանի քահանաներ՝ ազգութեամբ «Societatis Jesu» ընկերութեան անդամներից և որոնք պէտք է ճանապարհորդէին որպէս մասնաւոր բնակչներ։ Առաքելութեան նպատակն էր—Հայաստանի մանրազնին խուզարկութիւնը, նրա նկուղեցական վիճակագրութեան, կրօնի և ժողովրդի կրօնական սովորութիւնների ուսումնասիրութիւնը և այն։ Այժմ այդ առաքելութեան անդամներից մինը, դը—Դաման, ինչպէս հաղորդում են թերթերը, Լիօնում հրատարակել է իր ապատորութիւնները, որ նա ստացել է Հայաստանում ճանապարհորդելով։ Այդ հրատարակութեան վերնագիրն է «Coup d'oil sur l'Arménie»։

—

Մարաքաղաքի թերթերը հաղորդում են, որ հոչակաւոր նկարիչ Յ. Այվազօվսկու վիճամիաչ օրհլեանին պիտի մասնակցեն և Պետերբուրգի հայերը, որոնց եկեղեցուն, ինչպէս յայտնի է, Այվազօվսկին նուիրել է իր մի պատկերը—«Քրիստոս ծովի վերայ»։

—

Շաբաթ օր, սեպտեմբերի 26-ին, ինչպէս յայտնեցինք, Թիֆլիսի առևտրական կլուբում տօնեցին Յ. Կ. Այվազօվսկու վիճամիաչը։ Կլուբի անդամներից մինը չնորհաւորական հեռագիրը էր ուղարկել օրհլեարին «Պետերբուրգ, դեղարուեստական ճեմարանը»։ Այդ հեռագրի պատասխանը ստացուել է այս օրերս կլուբի վերայ, որի մէջ օրհլեարը չնորհակալութիւն է յայտնում իրեն վիշածներուն համար։

—

Բազուի նաւթագործների մէջ, ինչպէս հաղորդում է «Мос. Вѣд.»-ին, տարց է բարձրացրած Չինաստանի, Յապոնիայի և Սիբիրի նաւահանգիստներն Բագուի նաւթ տանելու մասին։ Արևելքում մեծ քանակութեամբ նաւթը արտահանելու համար վլադիվոստոկում և Պետրօպավլովսկում մատրուխներ կայ նաւթային պահեստներ և լամպարի մազադիններ հիմնելու։ Այդ կեդրոնական պահեստներից կերօսինը և լամպարը կուղարկուին Սիբիրում և Չինաստանում բացուած ճիւղերին։

—

Եկող 1888 թուին պետութեան հաշուով չինուելիք երկաթուղիների համար ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի կազմած հաչուից երևում է, որ նչանակուած է 28,800,200 րուբլի, իսկ պետական երկաթուղիները ընդարձակելու և դրանց հարկաւոր նիւթեր պեղու համար նչանակած գումարն էլ հաչուելով, բոլոր գումարը որ եկող 1888 թուին պիտի գործադրուի երկաթուղիների վերայ, կհասնի 32,315,557 րուբլի։ Այդ գումարից Սուրամի անցքի և տօննէլի համար նչանակուած է (բացի բէլսերից և ամրացուցիչ նիւթերից) 4,400-000 րուբլի, իսկ վլադիկավկաս—Պետրօվսկի գծի համար, որ պիտի անցնի Կովկասեան գլխաւոր լեռնաշղթան կտրելով,—285,000 րուբլի։

—

Ժողովրդական կրթութեան մինիստրը գալ տարի ուսումնական ընկերութիւններին նպաստ տալ որոշել է 74,993 րուբլի, ի թիւս որոնց «Нов. Вр.»-ի ասելով պատմութեան և հնութեան Մօսկվայի ընկերութեան—5000 ր., Մօսկվայի հնագիտական ընկերութեան—500 ր., Պետերբուրգի հնագրանական ընկերութեան—6000 ր., հրնագիտական ինստիտուտին—6000 ր. և ուրիշ զանազան ընկերութիւնների—39,578 րուբլի։

—

Հոկտեմբերի 1-ին քազաքիս մօտ զանազ Մցխէթ գիւղի (Վրաստանի նախկին արքայանիստ քաղաքի) եկեղեցու տօնն էր։ Ինչպէս ամեն տարի, նոյնպէս և այս տարի առաւօտուանից մինչև գիշերը երկաթուղու գնացքները բանում էին. ահագին բազմութիւնով ծածկուած էր երկաթուղու կայարանը և նրան չրջապատող հրապարակը. կարելի է ասել, որ ամբողջ Թիֆլիսը ոտքի վերայ էր. մինչև և մանաւոր հասարակ արհեստաւոր դասից վրացի, հայ, ռուս մարդ թէ կին, այդ տօնը առիթ առած գնում էին Մցխէթ քէֆ անելու կամ պարապ չրջելու երկաթուղու կայարանի չուրջը։ Այդ տօնի պատճառով և ապարաններում չէին բանում, դրա համար ուրբաթ օրը տեղական լրագիրները լոյս չտեսան։

—

Անցեալները, «Волж. Вѣст.»-ի ասելով Ղազանում աճուրդով ծախվում էր մի գրասէրի գրադարանը։ Հանդէսնեբի մեծ մասը անհատական էժան գներով են ծախուած։ Այսպէս օրինակ, «Библіотека для чтенія»-ի 30 տարուայ հատորները, որ հանում են 300 հատորի, ծախուել է չորս րուբլի և մի քանի կոպէկով. «Русскій Вѣстникъ»-ի 26 տարուայ հատորները մօտ (300 հատ) ծախուել է երկու րուբլի և մի քանի կոպէկով. համեմատաբար մի փոքր աւելի թանկ ծախուեցան «Отеч. Записки»-ի և «Современникъ»-ի հատորները, թէև վերջինս, 1848 թուից ընկսած մինչև 1855 թուի հատորները ծախուեցան ամեն մի տարուանը 15 կոպէկով, այնինչ ամեն մի հատորը 1½ կոպէկով, և այն էլ դեռ կազմած... «Вѣстникъ Европы», «Репертуаръ» և «Пантеонъ»-ը (17 տարուան) նոյնպէս չափազանց էժան գներով են ծախուել։

—

Թիֆլիսի չուկայում և հրապարակներում վաճառուող մթերքների գները 1887-ի հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը թանկ հաց — սպիտակ ալիւրից 1 ֆ. 5 կ., ցորենի ալիւրից 1-ին տեսակի 1 ֆ. 3 կ., 2-րդ տեսակի 1 ֆ. 2½ կոպէկ։ Միւնոյն ալիւրից Թանգում թխած 1-ին տեսակի 1 ֆ. 5 կ., 2-րդ տեսակի 1 ֆ. 3½ կ., 3-րդ տեսակի 1 ֆ. 3 կոպէկ։ Սպիտակ և ցորենի ալիւրից խառն լաւաշների 1-ին տեսակի 1 ֆ. 5 կ., 2-րդ տեսակի 1 ֆ. 4 կոպէկ։ Տաւարի մսի 1-ին տեսակը առանց ոսկրոտ կտորի 1 ֆ. 7 կ., 2-րդ տեսակի 1 ֆ. 6 կ., տեսակի 1 ֆ. 13 կոպէկ։ Ոչխարի մսի 1 ֆ. 7 կոպէկ։ Այս գները պարտաւորեցուցիչ չեն գիւղերից բերած և Թիֆլիսի հրապարակի վերայ վաճառող մթերքների համար։

—

Վ ր ի պ ա կ.—«Նոր Դար»-ի անցեալ № 165-ի մէջ անզգուշութիւնից տպագրական չատ սխալներ են տպրդել։ Այսպէս քրոնիկոնի առաջին լուրի մէջ հետևեալ անճչտութիւններն են մտել. ա. 9-րդ տողի մէջ փոխանակ «189 հոգու», պէտք է լինի «689 հոգու». 14-րդ տողում «իչխանների» խօսքից յետոյ պիտի լինի «ազնուականների և պաշտօնեաների». 21-րդ տողում փոխանակ «17 (26, 5%) հոգի»՝ պէտք է լինի «178 (26,5%) հոգի», վրացիներ—131 (19%) հոգի, 22-րդ տողում փոխանակ «(16,5%)՝ պէտք է լինի «(86,5%)». 29-րդ տողում փոխանակ «(%)»-ի պէտք է լինի «(8,9%)։ Նոյնպէս երրորդ երեսի 4-րդ սիւնեակի ներքևից 12-րդ տողից սկսած՝ մինչև 5-րդ սիւնեակի (վերևից հաչուած) 34-րդ տողը՝ փոխանակ խառն լուրերի մէջ լինելու քաղաքականի մէջ է ընկել։ Իսկ նոյն 5-րդ սիւնեակի 51-րդ տողի առաջին խօսքը փոխանակ «չենք»՝ պէտք է լինի «էինք»։

ՉԷՅԹՈՒՆԻ ՀՐԿԻԶԵԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՂԱԾ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՇԻՒԸ. ԻՆՉ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ ԵՒ ՈՒՄ ՁԵՌՔՈՎ ՈՐՔԱՆ ԳՈՒՄԱՐ Է ՍՏԱՑԵԼ «ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

		Րուբլի	Կոպ.
Թիֆլիսից.	Գ. Աբուբալոքեան և Ս. Իւզբաչեան . . .	75	10
Սալիանից.	Յովսէփ Թամամչեան	12	»
Վաղարչապատից.	Եփրեմ Սարկաւագ	170	»
Դիլ-Արվադից.	Չհանգիր Դանիէլեան և Արտէմ Յարութիւնեան	51	»
Բագուից.	Յումչուղ Բաղդասարեան.	61	»
Լայպցիգից.	Վեց հայ ուսանողներ	42	»
Մօսկվայից.	Ուսանող Սամիսոն Յարութիւնեան . . .	35	»
Օդեսայից.	Աբգար Տէր-Յակովբեան	53	»
Ալէքսանդրապօլից.	Մի հայ տիկին.	5	»
Բագուից.	Ա. Փաչալեանց եղբայրսիրական ընկերութեան անդամներից	126	»
Սալիանից.	Յովհաննէս Իւզբաչեան	24	40
Նախիջից.	Ս. Շահազեան	56	40
Մեղ Վարթքիլիս.	Հ. Սամբօլեան և Մ. Յարութիւնեան .	28	30
Բագուից.	Ալէքսանդր Աբէլեան	96	»
Կիրչից.	Մ. Տէր-Աստուածատուրեանց	13	21
Գօրիից.	Սեմինարիայի հայ աչակերտներ	5	»
Արմաւիրից.	Ստեփան Առաքելեանց	100	»
Պետրօվսկուց.	Կ. Կոստանեան	25	»
Դանձակից.	Յովսէփ Խօջաչեան	50	20
Թիֆլիսից.	Մի քանի հոգի	3	50
Դանձակից.	Աւետիք Թառաւեան.	34	70
Թիֆլիսից.	օր. Թեկղէ Գասպարեան	12	50
Նոր-Նախիջևանից Մեծ-Սալա գիւղից	Երկու անգամով Ա. Ջալալեանց	94	50
Քարվանսարայից.	. . . . .	15	»
Լոզանիկից.	Ս. Յ. Ս.	5	»
Ախալցխայից.	Խ. Ա. Մ.	7	50
Թիֆլիսից.	Խոհարար Ղազար Թաղիվերդեան	15	»
Մէչեդիաներից.	Տ. Ս. Փանեան	55	»
Բագուից.	Գ. Սահակիկեան	72	»
Կամենկից.	Թադէոս Դիլբարեան	24	»
Ջալալ-Օղլուց.	Ղազարոս Եղեկեանց.	21	»
Բագուից.	Ս. Սարգսեան	24	»
Նօվօչերկասկ.	Յարութիւն Մուրադեան	26	»
Շուշուց.	Մովսէս Շահնազարեան	35	»
		1473	31
«Նոր-Դար»-ի խմբագրութիւնից	. . . . .	26	69
		1500	00

ԿԱՐԻՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ *)

Ներկայումս Ամերիկայի Միացեալ Նահանգներում վաճառականութեան գործերը գտնւում են ծանր դրութեան մէջ։ Ամէն կողմից լսւում են գանգատներ, որ առեւտուրը շատ վատ է գնում, որ ապրանքների գները ցածրացել են, որ ապրանքները մնում են անվաճառ, որ ոչ ոք չի գնում, որ ոչ ոք փող չունի, որ ամէն մարդ նեղ է, որ ամէն մարդ ձգտում է ծախսերը կրճատել, որ ամէն մարդ ուզում է ինչ որ կարելի է խնայել, որ ամէն մարդ ուզում է ինչ որ կարելի է ետ պահել։ Ամէն կողմից լսւում են գանգատներ, որ ամէն ինչ ընկել է, որ ամէն ինչ ընկնում է, որ ամէն ինչ ընկնելու վրայ է

Ե. Ի. Կոմիսիոնի զեկուցումը

* * *

...ժողովը

«Ոչ մի ժողով չի կարող նոր հարկեր սահմանել, եթե նա ներկայացուցիչ չէ ամբողջ ազգի, եթե նա ներկայացուցիչ չէ ամբողջ ազգի, եթե նա ներկայացուցիչ չէ ամբողջ ազգի

պի իտալական կառավարութեան խընդիրն է եղել։ Բայց կան մերթեր, որոնք բողոքում են այդ տեսակցութեան դէմ։ Ապացոյց օրինակ, «Jecalo» թերթը կարծում է, որ Իտալիայի քաղաքականապէս Աւստրիային մօտենալը կորստաբեր է և հակազդելի։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Հիւսիսային գործակալութիւնը Բերլինից հեռագրում է, որ Աֆրիկայում ճանապարհորդող չլատնի եանկէրը սեպտեմբերի 24-ին ճանապարհ է ընկել դէպի Պետերբուրգ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հակաչ վարունգ. — Սարատովի մագազիններից մինում, որպէս մի հազուագիւտ բան, ի տես է դրուած մի մեծ, հսկայ վարունգ, որի երկարութիւնն է մի արշին և ասանձից վերչակ և կշռում է վեց և մի քառորդ ֆունտ։ Վարունգը իր արտաքին ձեւով նմանում է S տառին։

***

Եւ տատանի հաւ. — Ջաւիջէրիայի կարուժ քաղաքում թռչունների առևտուր անող մի մարդ, անցեալները Սավօյեալից գնել է մի զարմանալի հաւ։ Այդ հաւն ունի երեք ոտք, իսկ մարմնի առաջի մասն էլ չատնապէս բաժանուած է երկու առանձին մասերի։ Այդ հաւը ուղարկել են բժշկական ուսումնարանի պրօֆէսօրների քննութեան։

***

Սպանութիւն. — Վիեննայում մի գործարանատէր, անի Նօատ անունով, նիւթական զանազան անաջողութիւնների ազդեցութեամբ հոգեկան անկումի դրութեան էր հասել, որ նրան սրընանկ հրատարակելու նախընթաց օրը, սպանում է իր կնոջը, երկու զաւակներին—մինը չորս և միւսը երկու տարեկան, իսկ վերջն էլ սպանում է իրեն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՐՈՒԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 30 Սեպտեմբերի. Սենատի եղեռնական վճռաբեկ դեպարտամենտը, քննելով Մոսկվայի վաճառական, օտարերկրացի--Շպերլինգի գանգատը Մոսկվայի դատական պալատի դէմ, որ նրան 500 րուբլի տուգանքի էր ենթարկել, պատճառ որ նա Լայպցիգի կեանք ապահովող ընկերութեան համար ապահովացումն էր ընդունել, և փակել էր այդ ընկերութեան ճիւղը, որ ընդունում էր ապահովացումն, բայատրեց, որ այդպիսի գործակալութիւնները Ռուսիայում չեն թոյլատրվում առանց 500,000 րուբլի գրաւականի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 1 Հոկտեմբերի. «Минута» և «Сынъ Отечества» թերթերի հատով ծախելը արգիլուած է։

ՊԱՐԻԶ. Զինուորական քննիչ յանձնաժողովը միաձայն որոշեց. գեներալ Կօֆօրէլին հրաժարացնել պաշտօնից զինուորական պատուի դէմ գործած յանցանքի համար։

ԼՕՆԴՕՆ. Տրօֆալգարսկվերում կայացաւ անգործ մնացած բանուորների միտինգ, որոնք, միտինգից յետոյ, սուգի դրօշակով ուղղուեցան դէպի Սիտի։ Անկարգութիւններ չպատահեցան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 2 Հոկտեմբերի.— «Journal de St. Pètersbourg»-ը դըրականապէս հերքում է և կատարեալ մտացածին է համարում ֆըրանսիական լրագիրների կայսերական ընտանիքի անդամներից մինի առաջարկած կենաց բաժակի մասին լուրը, որ իբր թէ առաջարկել է ֆրանսիական նաւի վերայ, որով օգոստափետ ճանապար հորդը վերադարձաւ Ամերիկայից։

ՐԻՕՒ. Այսօր տօնվում է այստեղի պօլիտեխնիկումի քսանհինգամեակը։ Երէկ, այդ առթիւ աջհավաս հանդիսաւոր ընթացք էր սարքուել։ Պօլիտեխնիկումում ուսանողների թիւն է 798։

ՊԱՐԻԶ. Զինուորական մինիստրը հարցրեց գեներալ Բուլանժէին, թէ միթէ ճշմարիտ է մի քանի լրագիրների հաղորդած այն յայտարարութիւնը, որ վերագրվում է իրեն և որի մէջ խօսվում է մինիստրի՝ իր դէմ սարքած խարդաւանութիւնների մասին։ Բուլանժէն պատասխանեց, որ այդ լրագիրները նա չէ կարդացել։ Մինիստրը այդ պատասխանը անբաւարար համարեց և հաստատ բացատրութիւններ պահանջեց և երկրորդ անգամ անգոհացուցիչ պատասխան ստացուելու միջոցին, մինիստրը Բուլանժէին պիտի կարգապահական պատասխանատուութեան ենթարկէ։

«Temps» հերքում է այն լուրերը, թէ Ռուսիան և Ֆրանսիան մտադիր են բօլղարական խնդրի լուծման համար Եւրոպական կօնֆերէնցիա հրաւիրելու։

Մարօկկօյից ստացուած տեղեկութիւններին նայելով, Սուլթանը մի փոքր լաւ է և նա երևում է ժողովրդի աչքին։

ՊԱՐԻԶ. Բուլանժէն պատասխանեց Ֆերրօնին, որ ինքը իրաւ որ արել է լրագիրների իրեն վերագրած յայտարարութիւնը։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

գնացքների երթևեկութիւնը «Թիֆլիսի» կայարանում։

Բաթում գնում է պօստ. առաւ. 8 ժ. 49 վ
Բաթումից գալիս է ,, երեկ. 10 ժ. 15 վ.
Բագու գնում է ,, երեկ. 10 ժ. 46 վ.
Բագուից գալիս է ,, առաւ. 8 ժ. 6 վ
Թիֆլիսից Սուրամ գնում է ապրանք-մարդակից գնացքը ցեր. 3 ժ. 21 վ.
Սուրամից գալիս ապր. մարդ. գնացք առաւ. . . . . 8 ժ. 24 վ.
Թիֆլիսից խառն գնաց. առաւօտ. 8 ժ. 20 վ.
Ազատաֆայից ,, ,, երեկոյեան 9 ժ. 18 վ.

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆՑԻ

Ուսումնարանը, մանկական պարտէզը և ՊԱՆՍԻՕՆԸ գետեղուած են Ֆրէյլինեան փողոցում, պետական բանկի դիմացը, տուն № 8. ընդունվում են աշակերտներ պիմնազիոնի առաջին դասարանի համար պատրաստելու։

4—2

ԴԱՍԱԳԻՐՔ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ

Գինն է 50 կոպէկ.

Դուստրով գնողների համար զիջումն կը լինի.

Վաճառվում է

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ՝ Ս. Վեհապետեանի գրախանութում.
ԵՐԵՒԱՆՈՒՄ՝ Աշխատասիրողի մօտ, որի հասցէն է. Учителю Арм. Дух. Семинаріи Макару Теръ-Саркисянцъ.
ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կեդրոնական գրավաճառանոցում։

10—6

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէյլի և Բաթումի մէջ։

Յունիսի 14-ին, Հոկտեմբերի 14-ին, «ԱՆԱՏՕԼ Ա.» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԵԼ» (Boschel) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԷՆՕՒԻՆ, նախկին գաղերէյա Արծրունիների № 103. 4—1

ԲԺԻՇԿ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԻՍԱՀԱԿԵԱՆՑԸ

Ընդունում է հիւանդներին առաւօտեան ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան՝ 4-ից մինչև 5-ը։

Բնակվում է Ստարի-Սրսեղնալի փողոցի վերայ, տուն Բակրադէի № 20.

X—10

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ լաւ գիտէ մաթեմատիկական առարկաները՝—ալգեբրայ, երկրաչափութիւն, թուաբանութիւն և այլն և աջողութեամբ պատրաստում է թէ հայոց և թէ ռուսաց ուսումնարանների համար աշակերտներ, ցանկանում է դասեր ունենալ յիշեալ առարկաներից։ Ցանկացողները կարող են դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

X—10

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՋԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐՈՒՄ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարևոր ընկերներ տան տիկիններին և ապնիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կեդրոնական պահեստում, Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Միքիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ։

Բաղումում. Միքայէլեան փողոցում, Միրզա Աւազեանի տ. | Բաթումում. Պօլիցիական փողոցում, Թէրզի օղլու տ.
Քութայիսում. Բուլվարի դէմ, Ձերեկովի տ. | Թեհրանում. Մարշ-Մէյդանի դէմ, բուլվարի վերայ։

Ի նրանց ճանապարհորդող գործակալներից յօթ

ՄԻԱՅՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՕՊԱՑԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԴՐՈՒԹԱԿԱԼԻ ՄՕՏ



Գ. ՆԻՅԴԼԻՆԳԵՐ

ՋԻՆԳԵՐԻ ԿԸՐԵՄՆԴՐՆԱՆԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՒՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ

1) Մեքենաները ունին ընդարձակ զործարան և համաշխարհային հռչակ։ 2) Դները ամենչափաւորներն են և միայն Զինգերի ընկերութեան մէջ։ 3) Ամեն տարի ծախվում է մօտ 700,000 հատ։ 4) Մեքենայի յատկութեանը չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմեքենայի գործարան։ 5) Թէ մեքենաները և թէ նրանց օգնական գործիքները միշտ լաւանում և կատարելագործվում են։ 6) Կարելի է ընտրել ամենամեծ քանակութեամբ և ամեն տեսակ ընտանեկան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաները զինուորական հագուստներ կարելու համար։ 7) Այս հռչակաւոր մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել։ Գնողները կարող են, եթէ կամենում են գրամը հեռագրեամ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շաբաթով, կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով գրամը վճարելու համար։ 8) Մեքենայի վերայ կատարելագործութիւնը և հիմնաւոր սովորելը ձրի է հմուտ վարպետուհիների համար։

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են ասեղները, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէնները ամենաչափաւոր գներով։

60—40

Дозволено цензурою Тифлисъ 2-го Октября 1887 г. Տպարան Մ. Գ. Փօխինեանց Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр. л. № 42.